

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հայկ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի
ամբիոնի հայցորդ*

Սահմանադրության իրավական պաշտպանության գործառույթն իրականացնում է պետական մարմինների մի ամբողջ համակարգ: Իշխանության երեք թևերը ներկայացնող պետական մարմիններն իրենց իրավասության շրջանակներում օժտված են հսկողական գործառույթներով: Նման բազմաբնույթ գործունեության հիմնական նպատակն է սահմանադրական հսկողություն իրականացնելու միջոցով ապահովել Սահմանադրության իրավական պաշտպանությունն ու նրա գերակայությունը երկրի իրավական համակարգում:

Սահմանադրական հսկողություն հասկացությունը պետական շինարարության տեսության մեջ առաջացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Դրա էությունն ու օրինականության ապահովման գործուն նրա նշանակությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է այն համեմատել սահմանադրական վերահսկողության հետ: «Սահմանադրական վերահսկողություն» եզրույթը ենթադրում է հանրային իշխանության մարմինների ակտերի և գործողությունների (անգործության)՝ սահմանադրությանը համապատասխանության ստուգում: Նման ստուգման արդյունքում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող իրավական ակտը, մինչդեռ հսկողությունը կրում է պասիվ բնույթ, ինչն արտահայտվում է՝ հսկողություն իրականացնող սուբյեկտին համապատասխան ի-

րավասու մարմին դիմելու իրավունք վերապահելով: Տվյալ դեպքում վերահսկվող իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելու իրավասությունը պատկանում է ոչ թե հսկողություն, այլ վերահսկողություն իրականացնող մարմին²: Հսկողություն իրականացնող մարմինները լավագույն դեպքում կարող են կասեցնել տվյալ ակտի գործողությունը կամ կիրառումը և վիճարկվող ակտի սահմանադրականությունը պարզելու համար դիմել վերահսկողություն իրականացնող մարմնին³: Այսպիսով, վիճարկվող ակտի սահմանադրականության հարցի լուծման գործընթացը կոչվում է սահմանադրական վերահսկողություն, իսկ դիմող սուբյեկտի կողմից նախաձեռնություն դրսևորելը պետք է դիտարկել որպես վերահսկողությանն օժանդակող գործունեություն և սահմանադրական վերահսկողության (լայն իմաստով) բաղկացուցիչ մաս՝ սահմանադրական հսկողություն⁴:

Ըստ էության սահմանադրական պատշաճ հսկողության իրականացմամբ իրավունքի համակարգում ապահովվում է Սահմանադրության գերակայությունը: Սահմանադրական հսկողության էությունը այն է, երբ հսկողություն իրականացնող մարմինը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից իրականացնում է ամենօրյա դիտարկում, սակայն ոչ միայն համապատասխան դիմումի կամ բողոքի կապակցությամբ, այլև սեփական նախաձեռնությամբ, իր ամենօրյա գործունեության ընթացքում: Ուստի, սահմանադրական հսկողությունը, ըստ էության, ավելի լայն ընդգրկում ունի, քան սահմանադրական դատարան դիմելու գործառույթ իրականացնելը, քանի որ այն ներառում է նաև ի-

րավասու մարմինների ամենօրյա գործունեության ընթացքում Սահմանադրության գերակայության ապահովմանն ուղղված այլ գործառույթների իրականացում: Այստեղ, մասնավորապես, նկատի ունենք ՀՀ Նախագահի կողմից օրինաստեղծ գործընթացին մասնակցելը և սեփական նորմաստեղծ լիազորություններն իրականացնելը:

Հանդիսանալով պետության գլուխը՝ Հանրապետության Նախագահը՝ որպես Սահմանադրության պահպանմանը հետևող ինստիտուտ, օժտված է սահմանադրական հսկողության ոլորտին վերաբերող մի շարք գործառույթներով: Մասնավորապես, Հանրապետության Նախագահը կոչված է իրականացնելու իր լիազորություններն այնպես, որ կանխի իշխանության չարաչափունը իշխանության առանձին ճյուղերի կողմից՝ դրանով ևս իրականացնելով Սահմանադրության պահպանման իր գործառույթը: Այս առումով Հանրապետության Նախագահն օժտված է իրավական անհրաժեշտ լծակների ամբողջական մի համալիրով: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Տեյլենկոն, Սահմանադրության պահպանման երաշխավորի հիմնական աշխատանքը մարդու առջև պետական իշխանության մարմինների պատասխանատվության ապահովումն է, որպեսզի վերջիններս դուրս չգան Սահմանադրությամբ նախանշված շրջանակներից: Այդ առնչությամբ էլ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին օժտում է սահմանադրական հսկողության մի շարք գործառույթներով, որոնցից կարևորը կառավարության ակտերի իրավական ուժը կասեցնելու և Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունքն է՝:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագա-

հը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է՝: ՀՀ Սահմանադրության դրույթների և իրավական այլ ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հանրապետության Նախագահն իր հսկողական լիազորություններն իրականացնում է հիմնականում երկու եղանակով՝ անմիջականորեն և միջնորդավորված (համապատասխան մարմինների, ծառայությունների ու պաշտոնատար անձանց միջոցով):

Հանրապետության Նախագահի կողմից անմիջական հսկողություն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված օրինաստեղծ գործընթացին մասնակցելու, սեփական նորմաստեղծ լիազորություններն իրականացնելու, կառավարության, պետական մի շարք մարմինների ձևավորման, բարձրաստիճան որոշ պաշտոնատար անձանց պաշտոնակ անելու, ինչպես նաև սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքն իրականացնելու միջոցով:

ՀՀ Նախագահի հսկողական լիազորությունների շարքում առանձնակի կարևորվում է Ազգային ժողովի ընդունած օրենքների վերաբերյալ հետաձգող արգելքի (վետոյի) իրավունքը: Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն կամ այդ ժամկետում կարող է տվյալ օրենքն իր առարկություններով և առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում, եթե գտնում է, որ օրենքը կամ դրա առանձին դրույթները հակասում են հանրապետության Հիմնական օրենքին: Օրինաստեղծ գործունեությանը հակակշռող իր այս լիազորությամբ ՀՀ Նախագահն իրականացնում է նաև սահմանադրական հսկողություն: Բնականաբար, իր կողմից ստորագրվող օրենքում Սահմանադրությանը հակասող դրույթների առկայության դեպքում Նախագահը պարտավոր է կիրառել օրենսդրական հետաձգման իր իրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վունքը, որն օրենսդրական ակտերի որակի նկատմամբ հսկողության յուրօրինակ միջոց է:

2001-2010 թթ. ընթացքում ՀՀ Նախագահն ընդհանենը 10 անգամ է կիրառել օրենսդրական հետաձգման իր իրավունքը, որից մեկի դեպքում ՀՀ Նախագահը հետ է կանչել օրինագիծը Աժ-ին վերադարձնելու մասին իր որոշումը և նպատակահարմար է համարել ստորագրել այդ օրենքը⁷, մեկ դեպքում ՀՀ Նախագահն ընդհանրապես առարկել է օրենքի ընդունմանը՝ նրանում վիճահարույց դրույթների առկայության պատճառով (2003թ. հոկտեմբեր), սակայն չնշելով որևէ առաջարկություն կամ առարկություն⁸, իսկ մեկ այլ դեպքում էլ ՀՀ Նախագահն առարկել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմանը՝ առաջարկելով նախաձեռնել նոր օրենքի ընդունում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայություն նախատեսելով⁹: Ինչպես ցույց է տալիս ՀՀ Նախագահի կողմից օրենսդրական հետաձգման իր իրավունքի իրականացման պրակտիկայի ուսումնասիրությունը, վերը նշված 10 կամ առավել ճիշտ լինելու պարագայում՝ 9 դեպքերից միայն 2-ում է՝ Ազգային ժողովը չի համաձայնվել ՀՀ Նախագահի առարկություններին և հաշվի չի առել նրա ներկայացրած առաջարկությունները: Ընդ որում, նշված դեպքերից միայն 2-ում է առարկությունը կրել իրավական բնույթ, այն է՝ միտված է եղել ՀՀ իրավական համակարգի զարգացմանը կամ իրավական ակտում ներքին հակասության բացառմանը¹⁰:

Հարկ է նշել, որ ներկայումս առկա իրավակարգավորման պայմաններում ՀՀ Նախագահի կողմից իրականացվող սահմանադրական հսկողության կառուցակարգը անհրաժեշտ արդյունավետությամբ չի գոր-

ծում: Խնդիրն այն, որ Ազգային ժողովի ընդունած օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով ՀՀ Նախագահին վերապահված սահմանդրական դատարան դիմելու իրավունքը չի դիտվում նաև որպես նրա պարտականություն, չնայած այն ուղղակի բխում է ՀՀ Նախագահի՝ Սահմանադրության երաշխավորը հանդիսանալու տրամաբանությունից: Այդ մասին է վկայում ՀՀ Նախագահի պասիվ գործունեությունը այս ոլորտում: Հայտնի է, որ ՀՀ Նախագահի նշված լիազորության իրականացման գործում լուրջ անելիքներ ունի նրա աշխատակազմը: «ՀՀ Նախագահի աշխատակազմի կառուցողությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2007թ. օգոստոսի 17-ի ՆՀ-193-Ն հրամանագրի 39-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահի աշխատակազմում գործում է իրավաբանական վարչություն, որը մասնավորապես համակարգում է ՀՀ Նախագահի ստորագրմանը, հաստատմանը կամ վավերացմանը ներկայացված իրավական ակտերի և դրանց նախագծերի փորձաքննության աշխատանքները, ապահովում է ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված հարցերով ՀՀ Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառնության իրականացումը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Նախագահի՝ որպես սահմանադրական հսկողության սուբյեկտ, հանդես գալուն առնչվող նրա գրեթե բոլոր գործառնությունների պատշաճ իրականացման համար պատասխանատու է ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչությունը: Սակայն պետք է փաստել, որ, չնայած օրենսդրական և կազմակերպական բավարար հնարավորությունների առկայությանը, ՀՀ Նախագահի (և ոչ միայն նրա, այլև սահմանադրական հսկողություն իրականացնող գրեթե բոլոր մարմինների) կողմից չի դրսևորվում անհրաժեշտ նախաձեռնողականություն այս հարցում: Նման իրավիճակը վկայում է այս խնդրի նկատմամբ ոչ բավարար ուշադրության մասին: ՀՀ Նախագահի աշ-

խատակազմում կամ Նախագահին կից չի գործում որևէ մասնագիտացված կամ դրա համար հատուկ ստեղծված ստորաբաժանում կամ կառույց, որն Ազգային ժողովի ընդունած օրենքների սահմանադրականության հարցը պարզելու նպատակով կիրականացնելու պատշաճ իրավական փարձաքննություն: Ազգային ժողովում ևս բացակայում են համապատասխան կառուցակարգեր սահմանադրաիրավական առումով զրագետ օրենքներ մշակելու համար: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, երբ օրենսդիրը չունի սահմանադրաիրավական մշակույթի բավարար մակարդակ, սահմանադրական հսկողություն իրականացնող մարմինները ոչ լիարժեք են մասնագիտացած սահմանադրաիրավական հարցերում, իսկ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմին հանդիսացող սահմանադրական դատարանը տվյալ պարագայում անզոր է, քանի որ ակտիվ դեր ստանձնելու համար նրան անհրաժեշտ է դիմող սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ Նախագահի ակտիվ նախաձեռնությունը:

Արդյունքում ՀՀ Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո զգալի թվով օրենքներ կամ դրանց առանձին դրույթներ, այս կամ այն դիմող սուբյեկտի¹¹ նախաձեռնությամբ ենթարկվելով սահմանադրական վերահսկողության, ճանաչվում են հակասահմանադրական¹²: Նշված փաստերը խոսում են այն մասին, որ ՀՀ Նախագահի կողմից Ազգային ժողովի ընդունած օրենքներն ստորագրելու ընթացքում պատշաճ սահմանադրական հսկողություն չի իրականացվում վերոնշյալ պատճառներով: Բացի այդ, ՀՀ Նախագահի կողմից որակյալ հսկողություն իրականացնելու համար որոշակի առումով խոչընդոտ է նաև քաղաքական ուժերի հարաբերակցությունն Ազգային ժողովում, քանի որ ՀՀ Նախագահի քաղաքական գիծը տանող և Ազգային ժողովում մեծամասնություն վայելող քաղաքական ուժերը, բնականաբար, իրականացնում են այնպիսի օ-

րինաստեղծ գործունեություն, որը հիմնականում համահունչ է տվյալ ոլորտում ՀՀ Նախագահի քաղաքականությանը կամ առնվազն համաձայնեցվում է նրա հետ: Այս առումով կարելի է ասել, որ օրենսդրական նախաձեռնությունները այս կամ այն չափով նախապես ստանում են ՀՀ Նախագահի հավանությունը և նոր միայն օրինագծերի տեսք ստանում, որի արդյունքում հետագայում զգալիորեն նվազում է այդ օրենքների նկատմամբ ՀՀ Նախագահի կողմից պատշաճ սահմանադրական հսկողություն իրականացնելու հավանականությունը:

Այնուամենայնիվ, սահմանադրաիրավական առումով Հանրապետության Նախագահը պարտավոր է հետևել, որ օրենքները համապատասխանեն Սահմանադրությանը՝ այդ նպատակով կիրառելով ոչ միայն օրենսդրական հետաձգման (որպես կանխիչ գործառույթ կամ նախնական հսկողություն), այլև Սահմանադրությանը գործող օրենքի և Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված այլ իրավական ակտերի համապատասխանությունը որոշելու հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունքը՝ որպես հետագա հսկողություն իրականացնելու ձև: Սակայն ձևավորված իրավիճակում սահմանադրական հսկողություն իրականացնելու առումով անիմաստ է ակնկալել ՀՀ Նախագահի ակտիվություն նաև հետագայում, քանի որ հսկողությունն իրականացվում է ընդունված օրենքների նկատմամբ, որոնք, արժանանալով նրա հավանությանը, ժամանակին արդեն ստորագրվել են ՀՀ Նախագահի կողմից:

Այս կապակցությամբ, մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ ներդնել սահմանադրական նախնական վերահսկողության ինստիտուտը, որը ՀՀ Նախագահին հնարավորություն կտա մինչև Ազգային ժողովից ստացած օրենքի ստորագրումը դրա սահմանադրականության հարցը պարզելու նպատակով այն ուղարկել սահմանադրական դատարան՝ տվյալ օրինա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գիծը ենթարկելով սահմանադրական վերահսկողության: Նպատակահարմար կլինի նաև օրենքների շարքում առանձնացնել օրգանական օրենքների մի խումբ (օրինակ՝ Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում ընդունված օրենքները, նյութական և դատավարական օրենսգրքերը, կառավարության, դատական մարմինների և կուսակցությունների գործունեության, իրավական ակտերի ընդունման, ընտրությունների և հանրաքվեների անցկացման կարգը սահմանող, արտակարգ և ռազմական դրության ռեժիմը կանոնակարգող, վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքները), որոնք ենթակա են սահմանադրական պարտադիր նախնական վերահսկողության՝ առանց դիմող սուբյեկտի ակտիվ դերակատարման¹³: Մյուս կողմից՝ ընթացիկ (սովորական) օրենքները կարող են ենթարկվել նախնական վերահսկողության ոչ պարտադիր կարգով, իսկ նման վերահսկողության պահանջ առաջ քաշելու իրավունքով կարող են օժտվել Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը:

Նշված փոփոխությունների ամրագրումը կխթանի ՀՀ Նախագահի առավել ակտիվ գործունեությունը նշված ասպարեզում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ միջազգային պայմանագրերի առումով ՀՀ Նախագահը դրսևորում է բավականին մեծ ակտիվություն, ինչը պայմանավորված է սահմանադրական և օրենսդրական համապատասխան իմպերատիվ նորմերի առկայությամբ¹⁴: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի ամփոփ վիճակագրության համաձայն՝ 2009թ. ընթացքում ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացվել 54 դիմում, որոնք վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը

համապատասխանության հարցի որոշմանը¹⁵:

Օրենսդիր իշխանության ոլորտում ՀՀ Նախագահի սահմանադրական հսկողության գործառնությունների շարքում կարևորվում է նաև ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածով նախատեսված հանրաքվեով Սահմանադրությունը ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու գործընթացին ՀՀ Նախագահի մասնակցության հիմնահարցը: Ըստ նշված հոդվածի՝ հանրաքվեն նշանակում է ՀՀ Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ կամ իր նախաձեռնությամբ: **Առաջին դեպքում**, երբ նախաձեռնությունը Ազգային ժողովին է, նրա նախագահն Ազգային ժողովի առաջարկությամբ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին Ազգային ժողովի որոշումը համապատասխան նախագծի հետ միասին դրանք ընդունվելուց հետո՝ 7-օրյա ժամկետում, ուղարկում է Հանրապետության Նախագահին, որը դրանք ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, նշանակում է հանրաքվե կամ տվյալ նախագիծն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնում է Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դեպքում Ազգային ժողովի՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

Մյուս դեպքում, երբ Սահմանադրությունը ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես է գալիս ՀՀ Նախագահը, ապա ներկայացված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է այն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկե-

տում: Ազգային ժողովի նախագահը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը հանրաքվեի դնելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումը 7-օրյա ժամկետում ուղարկում է Հանրապետության նախագահին, իսկ Ազգային ժողովի՝ քվեարկությամբ չընդունված նախագիծը հանվում է շրջանառությունից («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 55-րդ և 78-րդ հոդվածներ):

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ ՀՀ նախագահին վերապահված լիազորությունները բավարար իրավական հիմք են ստեղծում նրա կողմից սահմանադրական հսկողության ոլորտում ակտիվ դերակատարում ունենալու իմաստով: Լինելով պետական իշխանության յուրօրինակ կրողը, ունենալով իշխանության բոլոր ճյուղերի հետ հատվող լիազորություններ՝ ՀՀ նախագահին ընձեռվում է իրական հնարավորություն՝ իրականացնելու պատշաճ սահմանադրական հսկողություն և ապահովելու Սահմանադրության գերակայությունը¹⁶:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անհատական դիմումների առատությունը, որի շնորհիվ այդ դիմումները բավական ազդեցություն են ունենում երկրում սահ-

մանադրական օրինականության ամրապնդման վրա, արդեն իսկ անժխտելի փաստ է, ապա նույնը չի կարելի ասել դիմող այլ սուբյեկտների, մասնավորապես ՀՀ նախագահի առնչությամբ: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց շարունակական բնույթ կրող պասիվությունը՝ հատկապես Սահմանադրության գերակայության երաշխավորման տեսանկյունից իրենց պարտականությունները չկատարելու հարցում¹⁷: Մեր կարծիքով, առանց սահմանադրական և դրան համապատասխան օրենսդրական փոփոխությունների սահմանադրական հսկողության սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ նախագահի պասիվ գործելակերպը միտում ունի մնալու անփոփոխ: Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրության համակարգային և նպատակաուղղված փոփոխության դեպքում հնարավոր է որոշակիորեն ակտիվացնել սահմանադրական հսկողության սուբյեկտների պասիվ վարքագիծը՝ դրանով իսկ բարձրացնելով սահմանադրական հսկողության դերակատարումը Սահմանադրության իրավական պաշտպանության ու նրա գերակայության ապահովման գործում:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 100-րդ և 101-րդ հոդվածները:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն.Այվազյան, Եր., 2008, էջ 662:

³ Տե՛ս Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2002, էջ 664: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությունը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար:

⁴ Վ. Մակլակովն առանձնացնում է սահմանադ-

րական վերահսկողությունը լայն և նեղ իմաստով՝ ըստ վերահսկվող ակտերի տեսակների: Մասնավորապես, եթե վերահսկողության օբյեկտ են իրավական բոլոր ակտերը, ապա խոսքը լայն իմաստով սահմանադրական վերահսկողության մասին է, իսկ եթե վերահսկվում են միայն օրենսդիր իշխանության ակտերը, ապա այստեղ արդեն գործ ունենք նեղ իմաստով սահմանադրական վերահսկողության հետ: Տե՛ս Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть. М., 2006, էջ 124-125:

⁵ Տե՛ս Тесленко М.В. Правовая охрана конституции Украины. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. М., 2009, էջ 40:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ⁶ Համանման ձևակերպումների ենթ հանդիպում նաև մի շարք այլ երկրների սահմանադրություններում՝ Նախագահը Սահմանադրության երաշխավորն է (ՌԴ Սահմանադրության 80-րդ հոդված), Սահմանադրության անխախտելիության երաշխավորն է (Ղազախստանի Սահմանադրության 40-րդ հոդված), հետևում է Սահմանադրության պահպանմանը (Ֆրանսիայի Սահմանադրության 5-րդ հոդված, Ուկրաինայի Սահմանադրության 102-րդ հոդված), ապահովում է Սահմանադրության պաշտպանությունն ու հանրային իշխանության բնականոն գործունեությունը (Ռուսիայի Սահմանադրության 80-րդ հոդված):
- ⁷ Խոսքը վերաբերում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2002 թ. նոյեմբերի 19-ին և ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2003 թ. մարտի 31-ին:
- ⁸ Նկատի ունենք «ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը այդպես էլ չի ստացել օրենքի կարգավիճակ:
- ⁹ Այս դեպքում 2004 թ. Աժ չի հաղթահարել ՀՀ Նախագահի օրենսդրական արգելքը. այդ օրենքում առաջին փոփոխությունը կատարվել է միայն 2006թ., որը չէր վերաբերում տվյալ հարցին:
- ¹⁰ Ինչ խոսք, ՀՀ Նախագահի օրենսդրական հետաձգման (վետոյի) իրավունքը նաև քաղաքական նշանակություն ունի, սակայն դա ամենևին չի բացառում այդ իրավունքի հսկողական նշանակությունը:
- ¹¹ Հիմնականում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա:
- ¹² Այսպես, 2007-2009թթ. ընթացքում 62 անհատական դիմումների հիման վրա 24 գործերով օրենքների նորմերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: ՀՀ սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ սահմանադրական դատարանը 31 գործով օրենքների դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Տես ՀՀ Սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 4:
- ¹³ Տես, օրինակ՝ Ռուսիայի Սահմանադրության 72-րդ հոդվածը: Այստեղ առաջարկվում է օրգանական օրենքների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացումը դիտել որպես օրինաստեղծ գործընթացի պարտադիր փուլ, որն իրականացվում է Հանրապետության Նախագահի կողմից մինչև օրենքի ստորագրումը: Տվյալ դեպքում Նախագահին նման իրավունքով օժտելը, որը միաժամանակ պարտականություն է, բխում է նրա սահմանադրաիրավական կարգավիճակից:
- ¹⁴ Տես ՀՀ սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետ, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդված:
- ¹⁵ Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 11:
- ¹⁶ 2007 թ. ընթացքում ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ Նախագահի 39, իսկ 2008թ. ընթացքում՝ 44, 2009թ.-ին՝ 54 դիմում, որոնք հիմնականում վերաբերել են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2007թ. ընթացքում ՀՀ Նախագահի կողմից Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա որևէ դիմում չի ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան, նման մեկ դիմում ներկայացվել էր 2006թ., որի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 2007թ.: Հիշատակված դիմումը վերաբերում էր «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի որոշ դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2008, էջ 8-9:
- ¹⁷ Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 4:

FUNCTION OF CONSTITUTIONAL SUPERVISION OF PRESIDENT OF RA AT LEGISLATIVE POWER

Hayk GRIGORYAN

postgraduate student of constitutional law cathedra of Law faculty of YSU

Almost all state bodies have function of constitutional supervision-head of state as guarantor of Constitution, parliament as legislative organ, ombudsman, government, courts and prosecutor's office. In this article author discusses the function of constitutional supervision of President of RA at legislative power.

As head of the state and as guarantor of Constitution President of the RA has powers at constitutional supervision system.

Direct function of constitutional supervision is legislated by force of participation at legislative process, realization self legislative power, forming government and other state bodies and appealing to constitutional court.

All these functions consider separately and at viewpoint of constitutional supervision as part of constitutional control. Author states that power of President of RA gives legal base for exact realization of function of constitutional supervision at legislative power. Author also gives some suggestions in order to activate the role of President of RA as an organ of constitutional supervision.